


ԱՌԱՔԵԼԱՏԻՊ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ ԵՒ ԱՆՈՆՑ ՀԱԲԱՏԱՐԻՄ ՅԱԶՈՐԴՆԵՐ

Posted on March 26, 2020 by Keghart



Category: [Opinions](#)



Մերթ Գ. Տերտերեան , Պեյրուբ, 15 Փետրուար 2020

Հազարամեակ մը առաջ թեւ արեան մէջ խեղդուեցաւ մարդու հոգեկան ազատագրութեան համար մղուած բարենորոգչական թնտրակեան՝ Նարեկացիական Յեղափոխութիւնը, 20-րդ դարուն յայտնուեցան մեր անշահախնդիր, համեստ դատումով՝ Նարեկացիական դպրոցի նոր սաներ, առաքելատիպ առաջնորդներ եւ անոնց հաւատարիմ յաջորդներ, որոնցմէ վեցը պիտի յիշենք այս գրութեան մէջ, շեշտելով, որ հինգը հայ աւետարանական են, մէկը՝ հայ առաքելական:

Այս գրութեան դրդապատճառը եղաւ «Արարատ» օրաթերթի 14, 21 եւ 22 Յունուար 2020 թուակիր երեք համարները, որոնք կարելոր նկատելով՝ պահած էինք, աւելի կեդրոնացած կարդալու համար զանոնք: Կիրակի, Փետրուարի 9-ին, կարդացի երեքը մէկ շունչով, հոգեպէս ջերմանալով՝ հակառակ դուրսի ցուրտին:

Յունուարի 14-ի համարին մէջ Աւետիս Ռազմիկի գրութիւնը կոչ մըն է «թերահաւատներուն»՝ վերանայելու իրենց վերապահ կամ սպասողական դիրքորոշումը Նիկոլ Փաշինեանի համակարգին հանդէպ:

Յունուարի 21-ի համարին մէջ տպուած է Լիւսի Տեօքմեճեանի հարցազրոյցը վեր. դոկտ. Փոլ Հայտոսթեանի հետ:

Յունուարի 22-ի համարին մէջ կայ Աւետիս Ռազմիկի երկրորդ գրութիւնը: Հրապարակումը Հրանդ Կիւզելեանի եւ Հրանդ Տիւնքի մասին է, նաեւ դոկտ. Երուանդ Հ. Քասունիի՝ Հրանդ Կիւզելեանին նուիրուած հատորին մասին:

Այսինքն, ուր օրուան մէջ գովաբանուած են հոյլ մը լուսաճակատ անուններ՝ Հրանդ Կիւզելեան, Հրանդ Տիւնք, վեր. դոկտ. Փոլ Հայտոսթեան, դոկտ. Երուանդ Հ. Քասունի եւ Աւետիս Ռազմիկ, որ, միաներուն նման, փաստած է իր ալ գիտակցումը մարդակերտումի եւ հայակերտումի առաքելութեան: Ան չի գոհանար այսքանով. անաչառ պատմաբանի ուղղամտութեամբ, մէկ կողմէ՝ կը հասկնայ ոմանց վերապահութիւնն ու սպասողական դիրքը Փաշինեանի սկզբնական շրջանի սխալներուն, անորոշութեանց եւ չափազանցութիւններուն նկատմամբ, միւս կողմէ, մեկնելով 2018-ի Դեկտեմբերին կայացած «արդար» եւ «անկաշառ» ընտրութիւններուն փաստէն, եւ 2019-ի աւարտին, ամապերջի հաշուեփակին մէջ Փաշինեանի բարձրացուցած «Յուսավառել թերահաւատները» նշանաբանէն, կը գրէ. «Մինչդեռ պահը ոչ միայն կը թելադրէ ըլլալ սթափ ու շրջահայեաց՝ բոլորին ուշադրութիւնը սեւեռելով պետականաշինութեան եւ հայրենաշինութեան առաքելութեան ուղղութեամբ: Եւ մանաւանդ գործի լծել վերապահները», քանի որ Հայաստան դուրս եկած է հին ուղիէն եւ մտած «նոր ուղիի մէջ»:

Հին ուղին օլիգարխիկ համակարգին ուղին էր: Տողերս գրողը յուսադրուած էր Փաշինեանի շարժումին դատապարտումովը օլիգարխիկ համակարգին, սակայն

համոզուած էր, որ մօտ 30 տարի արմատակալած այդ համակարգը անկարելի էր արմատախիլ ընել կարճ ժամանակի մէջ. ատիկա կը պահանջէր յաջորդական, հետեւողական պայքարի փուլեր, եւ ողջունեց շարժումը գրութեամբ մը, որու զուսպ վերնագիրն էր՝ «Շնորհաւոր՝ Հայութեան Փուլն Առաջին Փրկութեան»: Փաշինեանի շարժումին մանր-մունր թերութիւնները խոշորացոյցով խճճողներուն մեծ մասը հին համակարգին ուժերն էին: Արդեօ՞ք այսօր այդ ուժերը վերջնականապէս հաշտուած են եւ համակերպած նոր ուղիին: Մենք տակաւին կը մասնք սպասողական դիրքի մէջ եւ չենք համոզուած, թէ հին համակարգը կազմալուծուած է վերջնականօրէն:

Յիշեցնենք, թէ Աւետիս Ռազմիկ եղաւ Սփիւռքի՝ մատի վրայ հաշուուող այն փոքրաթիւ հրապարակագիրներէն, որոնք անաչառ մտաւորականի ուղղամտութեամբ եւ ճշմարիտ հայրենասիրութեամբ, ամէն Նոյեմբերի 29-ի յիշեցին Սովետական Հայաստանի Ոսկեդարը, մինչ այդ Ոսկեդարէն մեծապէս օգտուողներու ջախջախիչ մեծամասնութեան համար՝ «անցուկը մոռցուկ» եղաւ, երբ օլիգարխիկ համակարգին օլիգարխի նախագահները սկսան «շքանշաններ» շռայլել կաշառակեր մտաւորականներուն... իսկ Սիլվա Կապուտիկեանը եղաւ միակ «տղամարդը», որ մերժեց օլիգարխիկ համակարգին կաշառքը:

Աւետիս Ռազմիկ «Երկու Հրանդ. Մէկ Աղաղակ» վերնագրով իր երկրորդ գրութեան մէջ, խորաթափանց վերլուծումով ու բարեխիղճ աշխատանքով, հանրային կարծիքին փոխանցեց ցարդ բաւարար չափով չբացայայտուած բայց յոյժ կարեւոր տեղեկութիւններ երեք լուսամիտ ռահվիրաներու մասին.- նահատակ հերոս Հրանդ Տիւնք, մահափորձէ ազատած հերոս առաջնորդ Հրանդ Կիւզէլեան եւ վաստակաշատ հեղինակ դոկտ. Երուանդ Հ. Քասունի:

Ան Հրանդ Տիւնքը կ'որակէ «խաղաղութեան եւ երկխօսութեան ջատագով, զիրար ճանչնալու եւ հանդուրժելու հաւատաւոր մարտիկ, եւ ոչ թէ ատելութեան սերմնացան կամ կծու ազգայնամուլ...»: Այսինքն՝ համամարդկայնական: Եւ կը բացատրէ. «Տիւնքի անմարսելի նախաձեռնութիւնը այն էր, որ խելացի եւ ճկուն քայլով մը, մատչելի լեզուով, երկխօսութեան, փոխճանաչողութեան ակօս բացաւ թրքալեզու հայոց եւ Թուրքիոյ հասարակութեան հետ: (Այսինքն՝ ոչ թէ թուրքերու հետ, այլ՝ Թուրքիոյ բազմազգ ու բազմակրօն բնակչութեան հետ, թուրքիացիներուն հետ): Մօտեցաւ պատմութեան, փորփրեց մօտիկ անցեալը, ահագանգեց թաքնուած, իսլամացած եւ քրտացած հայերու գոյութեան իրողութեան մասին: Փաստօրէն, մելանով եւ թուղթով յեղաշրջեց Թուրքիոյ հասարակութեան մէկ կարեւոր շերտը: Չգաստութեան, սթափութեան եւ ինքնաճանաչողութեան մղեց անոնք, որոնք իրենք զիրենք թուրք կը կարծէին, սակայն բռնի կերպով օտարացած հայու խլեակներ էին: Խաղաղ պատերազմ մը, որ ճեղքելով Թուրքիոյ ներքին կեանքը՝ զօրաշարժեց մեծ զանգուած մը՝ ի նպաստ հայուն եւ հայոց ազգային ինքնագիտակցութեան... Սակայն, ուրկէ՞ ծնաւ այս գաղափարը»:

Ինքնութեան այս բացայայտումը մեծ նպաստ բերաւ Հայ Հողային Դատին,

Արեւմտահայաստանի ազատագրութեան դասին՝ գրաւեալ երկրին մէջ մեծ թիւով հայերու գոյութիւնը բացայայտելով, զոր կորսնցուցած կը կարծէինք մօտ դար մը ամբողջ...: Յիշեալ մեծ թիւով հայերը, ըստ ազգագրագետ Հայկազուն Ալվրցեանի, 4 միլիոն կը հաշուեն, իսկ ըստ Ժողովրդային Զինաստանի գիտնականի մը՝ մօտ 15 միլիոն:

Հոս է որ Աւետիս Ռազմիկ, շնորհիւ դոկտ. Երուանդ Հ. Քասունիի՝ Հրանդ Տիկօի սանահայր Հրանդ Կիւզելեանի մասին հրապարակած հատորին, կը խօսի այս առաքելատիպ ռահվիրայի փոթորկալից կեանքին եւ աննկուն պայքարին մասին:

Հրանդ Կիւզելեանի մասին երախտաշատ աշխատանք կատարած է վաստակաշատ կրթական մշակ, պատմաբան, հեղինակ, խմբագիր եւ համարձակախօս հրապարակագիր դոկտ. Երուանդ Հ. Քասունին, այս երրորդ աւետարանականը, Պէյրուզի մէջ հրատարակելով Կիւզելեան ռահվիրայի մասին «Պոլսոյ Պատանեկան Տունը. Տունդարձի Պատմութիւն Մը» խորագրով յուշագրութիւնը, զոր եզրափակած է հետեւեալ զուսպ բառերով. «Հրանդ՝ Պարոնը փրկուած էր մահափորձէ, բայց Հրանդ Տիկօ՝ սանը, ինկած էր դիտապաստ: Փակուած է այսօր Պոլսոյ Պատանեկան Տունը, բայց թուրքը դեռեւս կը շարունակէ հալածանքը, իսկ հալածեալները՝ իրենց ազգային գոյութեան պայքարը...»:

Աւետիս Ռազմիկ իր գրութեան մէջ յիշելով Հրանդ Կիւզելեանի փոթորկալից գոյապայքարին գլխաւոր անցքերը, կ'եզրակացնէ հետեւեալ կոչով. «Երկու Հրանդ , բայց մէկ աղաղակ: Այդ աղաղակն է՝ սիրելի հայ եղբայրներ եւ քոյրեր՝, դուք հարկը հազարաւոր թրքախօս եւ քրտախօս հարազատներ ունիք ձեր հողերուն վրայ: Փրկեցէ՛ք եւ սիրեցէ՛ք զանոնք, գուրգուրացէ՛ք անոնց վրայ: Դաւանափոխ եղած են՝ պարտադրուած, հայերէնին անծանօթ՝ ակամայ: Մեղք չունին անոնք, որ կեանքը զանոնք հարկադրած էր անագորոյն ճակատագրի մը»:

Շատ մեծ ու կարեւոր է այս աղաղակ-կոչին նշանակութիւնը Հայ Հողային Դատի հետապնդումին համար՝ բռնագրաւեալ հայրենի հողին վրայ մարդուժ ունենալու առումով: Պաղեստինեան Դատը պիտի չունենար այսօրուան զօրութիւնն ու հնչեղութիւնը եթէ բռնագրաւեալ Պաղեստինի հողի մէկ մասին վրայ ապրող պաղեստինցիներ չըլլային: Հողին իրաւունքը ունենալը բաւական չէ ինքնին, եթէ այդ հողին վրայ անոր տէր կանգնող չըլլայ:

Կարեւոր կը նկատենք այստեղ մէջբերել նաեւ իր առաքելութեան գիտակցութիւնն ունեցող դոկտ. Երուանդ Հ. Քասունիի սա բարացուցական գնահատականը Լիբանանահայ Գրական Շրջանակին՝ անոր յիսնամեակին առիթով. «Լիբանանահայ Գրական Շրջանակի տասնեակ տարիներու գոյատեւումը կ'իմաստաւորուի գիտակցութեամբը առաքելութեան մը, որու գաղափարին եւ ուղեգիծին հաւատարիմ կը մնան յանձնառու զինուորագրեալներ...»:

Ուշագրաւ, յոյժ կարեւոր ու քաղաքական յատկանիշ մը ունին հայ աւետարանական միտքի առաջնորդները. այդ՝ իրենց քաղաքական մտածողութիւնն է եւ քաղաքագիտութեան ուղղութեամբ լուրջ հետաքրքրութիւնը:

Դոկտ. Երուանդ Հ. Քասունի գնահատած է նաեւ Գրական Շրջանակի գործունէութիւնը լիբանանեան ընկերային ու քաղաքական կեանքին: Ան կ'ըսէ. «Գրական Շրջանակը հայ կեանքին ու մշակոյթին յաւելեալ՝ Լիբանանի ընկերային ու քաղաքական կեանքին գործունէութիւնը մասնակիցը եղաւ»: (Քասունի յաճախ կարեւոր նկատած է Մեսրոպ Մաշտոցի քաղաքական մտածողութիւնը):

Հայ միտքի աւետարանական ուրիշ առաջնորդ մըն ալ գնահատեց Գրական Շրջանակի դիալեկտիկ մտածելակերպը եւ դատապարտեց սեփականաշնորհումն ու շուկայական, նոր-ազատական, վայրի դրամատիքութիւնը: Ակնաբուժութեան գիտարար բժշկապետ Ռոպեր Ճեպեճեան գրեց. «Լիբանանահայ Գրական Շրջանակը աննկուն պաշտպանը եղաւ հայ ժողովուրդի վերին շահերուն: Եղաւ համահայկականութեան եզակի կեդրոն մը: Ի սկզբանէ ան ջանաց վերլուծել հարցերը դիալեկտիկական մտածելաեղանակով, որով նուազագոյն եղան իր շեղումները: Ան միշտ ալ կողմնակից եղաւ երկխօսութեան: Ան եղաւ փարոս մը՝ անձանձիր ջանքերով համագաղութային ուշադրութեան առարկայ դարձնելով, օրինակ, Տարագիր Արեւմտահայութեան Համասփիւռքեան Քոնկրետը՝ Արեւմտահայաստանի ազատագրութեան նպատակով, եւ վերապահութեամբ դիմաւորեց սեփականաշնորհումի շուկայական սանձագերծ համակարգը Արեւելահայաստանի մէջ: Անոր կարեւորագոյն մէկ իրագործումը եղաւ սատարելը հայ համայնքներուն սերտաճին (integration) հիւրընկալ արաբ շրջապատին հետ՝ ընդլուզումի ճամբով եւ ոչ թէ ներլուծումի»: Ընդլուզումի ճամբով սերտաճը կը նպաստէ հայապահպանումի ջանքին, մինչդէռ կերթոյսացումը օտար շրջապատի մէջ, կը սպառնայ հայապահպանումի ջանքին՝ ի վերջոյ յանգելով ամլութեան եւ ներլուծումի, ձուլումի: Սերտաճը հիւրընկալ ժողովուրդին նեցուկը կրնայ շահիլ Հայ Հողային Դատին:

Իսկ աւետարանական հոգեւորական վեր. դոկտ. Փոլ Հայտոսթեան գրեց. «Թող Աստուած օրինէ այս Շրջանակը: Վերջին հինգ տարիներու իմ անձնական ծանօթութեանս եւ մամուլով յայտարարուած ու հրապարակուած գրականութեան վրայ հիմնուելով, կը ներկայացնեմ շնորհաւորական խօսքս, գնահատելով Գրական Շրջանակի ջանքը՝ ազգային եւ մարդկային ինքնութեան նեղ սահմաններէն դուրս գալու: Անոր դրած շեշտը՝ միտքի եւ գաղափարի վրայ: Անոր դաստիարակչական առաքելութիւնն ու տեսլականը՝ համոզումի տէր անհատներ կերտելու: Եւ՝ անոր անդամներուն գործունէութիւնը Շրջանակի գործունէութեանց ղեկավարման ու գործադրումին մէջ»:

Ուրեմն, հոգեւոր հովիւ վերապատուելին ինք անձամբ չէ որ կ'օրինէ, այլ միայն կ'աղօթէ, որ օրինութեան միակ տէրը՝ Աստուած օրինէ, մինչդէռ Միջնադարի խաւա՛ր օրերուն, հոգեկան ստրկութեան օրերուն, Հռոմի պապը Աստուծմէ կը կորզէր ոչ միայն այդ

իրաւունքը, այլեւ թողութիւն շնորհելու իրաւունքը, եւ ստրկացուած կոյր հաւատացեալին ի՛նք թողութիւն կու տար՝ անոր վաճառելով «Թողութեան գիր» մը... , իսկ դարեր առաջ հայ թոնդրակեանները կը մերժէին հոգեւորականներուն նուիրապետական կարգը...: Մինչ վեր. Հայտոսթեան կը գնահատէ ազգայնամոլութեան ու միջազգայնամոլութեան նեղ սահմաններէն դուրս գալու Գրական Ծրջանակի ջանքը եւ կը գնահատէ Ծրջանակին դրած շեշտը մտքին ու գաղափարին վրայ, եւ ջանքը՝ կերտելու համոզումի տեր անհատներ, ուրիշ յարանուանութեան մը առաջնորդը կը դրուատեր կաղապարումը համոզումէ զուրկ կոյր հաւատացեալին...: Եւ վերջապէս, վերապատուելին կը գնահատէ Ծրջանակիս հաւաքական ղեկավարութեան դեմոկրատական սկզբունքը, որ քաղաքական եւ հասարակագիտական մտածողութիւն կ'ենթադրէ:

Վեր. դոկտ. Փոլ Հայտոսթեանի հետ Լիւսի Տեօքմեճեանի հարցազրոյցը լոյս կը սփռէ անոր բարոյական եւ հասարակական դիմագիծին վրայ: Կը շեշտէ իր առաքելութեան հանդէպ անոր պատասխանատուութեան զգացումը, անոր առաջնորդելու մղումը եւ յանձնառութեան պատրաստակամութիւնը, որոնք կորիզը կը կազմեն անոր արժեքափերուն: Կոչումով եւ առաքելութեամբ հոգեւորականին հետաքրքրութիւնները եղած են հոգեբանութիւնը, քաղաքագիտութիւնը, Միջին Արեւելքի հարցերը եւ մայրաքաղաքէն հեռու գտնուող վայրերու մէջ քարոզելը:

(Փակագիծ մը բանալով, յիշեցնենք, թէ Ֆիտել Քասթրօ CNN-ի թղթակիցի այն հարցումին, թէ Քուկայի Յեղափոխութեան դիրքը ի՞նչ է Կաթողիկէ ու Աւետարանական Եկեղեցիներուն նկատմամբ, ըսած է. «Յեղափոխութիւնը դեմ է Կաթողիկէ Եկեղեցիին, որ Եկեղեցի ունի միմիայն մայրաքաղաքին եւ մեծ քաղաքներուն մէջ, սակայն դրական է Աւետարանական Եկեղեցիին նկատմամբ, քանի որ ան ժողովարաններ ունի Քուկայի գրեթէ բոլոր գիւղերուն մէջ եւ քարոզիչներ կ'առաքէ այն հեռաւոր փոքր գիւղերը, որոնք հոգեւոր հովիւ չունին...»):

Դոկտորականի ուսանող եղած ժամանակ, Հայտոսթեան հետեւած է «Գործնական աստուածաբանութեան» եւ «Բարոյագիտութեան» դասընթացներուն: Ապրուստը ճարելու համար, ան համալսարանի ճաշարանին մէջ պնակ լուացած է...: (Դիտապաստ ինկած Տինքի կօշիկի ներբանին ծակը... եւ դոկտորականի ուսանողի՝ համալսարանի ճաշարանին մէջ պնակ լուալով իր ապրուստը ճարելը կը ճշդեն անոնց աշխատաւորական ինքնութիւնը...):

Երբ վեր. Փոլ Հայտոսթեան հրակիրուած է ստանձնելու Հայկազեան Համալսարանին տնօրէնութիւնը, նախ մերժած է՝ նախընտրելով հոգեւոր քարոզչութիւնը հեռաւոր շրջաններու մէջ, սակայն ի վերջոյ յօժարած է, բայց նախ՝ ինամակալ Մարմինին ներկայացուցած է Հայկազեանի տնօրէնութեան համար իր «Տեսիլք-Ծրագիր»ը Հայկազեանը վերածելու իսկապէս մրցունակ համալսարանի, ուր յաճախելով կը հպարտանայ նաեւ ոչ-հայ ուսանողը: Ան կը մերժէ «միջակութիւնները». այսօր՝ հարցը

մեքենականություն գոյատևելը չէ, այլ՝ ի՞նչ տեսիլով, ի՞նչ մակարդակով, ի՞նչ մրցունակությամբ գոյատևելը...: «Ես չեմ կրնար չտեսնել հոգեւորականի կոչումիս եական դերը ըրած բոլոր գործերուս մէջ...», նաեւ՝ «Ես ուսանողներուն միշտ կ'ըսեմ, որ շեշտը չդնեն կորսնցուցածին, չունեցածին, նուազածին, չգոյութեան վրայ, այլ՝ իրենց հիմնական կեդրոնացումը ըլլայ առկայ հնարաւորին վրայ. այդպիսով՝ իրենց ամբողջ ուժականութիւնը դրականի շրջուած կ'ըլլայ», - կ'ըսէ վեր. Հայտոսթեան:

Վերոյիշեալ անձերուն հասարակաց յատկանիշը նախ՝ առաքելութեան մը յանձնառութիւնն է, ապա՝ պատմական անհրաժեշտութեան մը գիտակցութիւնը, քաղաքական մտածողութիւնը, յառաջապահի խիզախութիւնն ու կարողութիւնը, համեստութեան բարոյական արժանիքը, եւ՝ նուազագոյն հնարաւորութեամբ գոհանալը: Միայն ասոնցմով կրնան ծառայել հասարակութեան՝ դառնալով առաջնորդներ եւ իրաւ հեղինակութիւններ՝ արժանի իբր երախտաւորներ յիշուելու եւ յարգանքի:

Այս երախտաւորները կ'առաջնորդեն առանց տիրապետելու: Այս իմաստութիւնը կը ջատագովեր չինացի իմաստասեր Լաօ Տէ:

Առանց տիրապետելու առաջնորդող առաքելատիպ իմաստուն մը, մարդոց հոգիները ազատագրող Նարեկացիական մը, բարենորոգիչ Թոնդրակեան մը, խաղաղութեան, երկխօսութեան եւ իրարճանաչողութեան մարտիկ մըն է այսօր Ֆրանչիսկոս պապը, որ կը ջանայ հին, դպրական՝ ստրկատիրական աստուածաբանութեամբ Վատիկանի փոխարէն կերտել ՆՈՐ Վատիկան՝ ՆՈՐ աստուածաբանութեամբ մը, որ Ազատագրութեան Աստուածաբանութիւնն է, որու լոյսին տակ՝ ներկայի վայրի դրամատիրական հասարակարգը ան Արդի Ստրկատիրական Հասարակարգ (Modern Slavery) կ'որակէ:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ղեկավար կղերական դասը կարիքն ունի շատ բան սորվելու Ֆրանչիսկոս պապէն, նախ եւ առաջ՝ Գրիգոր Նարեկացիէն ու Թոնդրակեան Բարենորոգչական Յեղափոխութենէն:

Մեռեալ հոգիներով հայեր ոչի՛նչ կրնան ընել Հայ Հողային Դատի հետապնդումին ի նպաստ. չեն կրնար օգտուիլ դեպի լաւն ընթացող ներկայի անցումային ժամանակներէն եւ Սեւրի Դաշնագրի ու Ուիլսոնեան Իրաւարար Արդար Վճիռի դարադարձէն (2020 թ.): Հաւանաբար վերջին առիթէն...

Ժամանակները մեզ չեն սպասեր: Մե՛նք պարտինք քալել ժամանակներուն հետ:

Արդեօ՞ք պիտի կարենանք չմնալ «Յիմար Կոյսեր»:

There are no comments yet.